Փոխանցումն	52500		3663	36
17 Տոմս բանկի 5% տոկոսաբեր բ· փոխառութեան յանուն խորհրդարանի Աղքատանոցին ընդ №№ 5276	500			
ընդ № 9634 և 9635 հատ 50 ր· .	300			
ընդ № 16715—16728· 14 հատ հարիւրական ր· .	1400			
1 Բանկի տոմս Ե· փոխառութեան որ առաջարկեցէ Ընդ № 4136	500			
1 Օբլիգացիա Գ· Արևելեան փոխառութեան ընդ № 195329	1000			
2 Տոմս Ներքին փոխառութեան հանդերձ խաղարկութեամբ				
Ա· Ընդ № 10950/15 . .	152	75		
Բ· Ընդ № 17421/8 . .	155			
1 Զակլադնոյ լիստ 6% Մոսկուայի Զեմելնի բանկի ընդ № 126419	500			
2 Օբլիգացիա Մոսկուայի քաղաքական ընկերութեան փարկի ընդ №№ 175615 և 284943 բատ 100 ր·	200			
Առ ձեռն պատրաստի դրամք	3	18		
			57210	93
Գումար . .			60874	29

Այլ եւ այլ հայաբնակ քաղաքներից եւ գիւղերից ստանում ենք շատ գրութիւններ, որով խնդրումեն մեզանից այլ եւ այլ բարենպատակ ընկերութեանց կանոնադրութեան օրինակներ, ի հարկէ, գուցէ իբրեւ օրինակ եւ առաջնորդ ունենալու համար նոյնատեսակ կանոններ խմբագրելու ժամանակ։ Բայց որովհետեւ կանոններ խմբագրել՝ խմբագրութեանս գործունէութեան շրջանից դուրս է, եւ մանաւանդ իւրաքանչիւր քաղաք կամ գիւղ ունի իւր տեղական հանգամանքները, որոնք անհրաժեշտ են ի նկատի ունենալ՝ նոյնպիսի կանոններ խմբագրելու ժամանակ, վասն որոյ հարկաւոր համարեցինք Աշտարափիս ներկայ ամսատետրում հրատարակել Ազգիս Վեհափառ Հայրապետի կոնդակաւ հաստատուած Գանձակու Հայոց Բարեգործական Ընկերութեան կանոնները, որոյ նպատակն է խնամ տանել Գանձակու եւ նորա գաւառի Հայ աղքատներին, թէ ի խրախոյս յիշեալ Ընկերութեան եւ թէ ի գիտութիւն եւ ի հրահանգ ամենայն սոյնատեսակ կանոններ խմբագրել ցանկացող Ազգայնոց մերոց։

ԿԱՆՈՆՔ·

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՍՆ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԱՂՔԱՏԱՑ։

Յօդ· 1·

Վասն խնամելոյ զաղքատս և զորբս Հայոց, որ ի Գանձակ քաղաքի և ի վիճակի նորին, հաստատի յայսմ քաղաքի Ընկերութիւն Բարեգործական բաղկացեալ ի հիմնադիր, յանփոփոխ և ի տարեկան անդամոց։

Յօդ· 2·

Ընկերութիւնս այս գտանի ընդ հովանաւորութեամբ Հոգևոր Կառավարութեան Հայոց Եկեղեցւոյ։

Յօդ· 3·

Հիմնադիր անդամք ընկերութեան նուիրեն միանուագ ի կազմութիւն դրամագլխոյ ոչ պակաս քան դ՝ռ-բէ-ր ռ--Բ-Լ-, անփոփոխք՝ ոչ պակաս քան դ՝է-ռ-ն ռ--Բ-Լ- միանդամայն, և տարեկանքն՝ ոչ պակաս քան ՝ԷրԷ+ ռ--Բ-Լ- յիւրաքանչիւր ամի։

Յօդ· 4·

Պարտաւորութիւն անդամոց ընկերութեան առ հասարակ է նպաստամատոյց լինել բանիւ և գործով խնամակալութեան աղքատաց, տնանկաց և որբոց՝ ըստ կարի ապահովելով զվիճակ նոցին։

Յօդ· 5·

Անդամք ընկերութեան իրաւունս ունին ներկայ լինելոյ խորհրդոց Խորհրդարանին և յայտնելոյ բանիւ կամ գրաւոր զկարծիս իւրեանց յաղագս գործոց և կարգադրութեանց Խորհրդարանին· բաց յայսմանէ իւրաքանչիւր ոք յանդամոց կարէ ստանալ՝ զօժանդակութիւնս նաև ի մասնաւոր անձանց, զոր և պարտէ նոյնութեամբ յանձնել Խորհրդարանին։

Յօդ· 6·

Խորհուրդն ընկերութեան կազմի ի նախագահէ և ի վեցից անդամոց, որք ընտրին եռամեայ ժամանակաւ յընդհանուր ժողովոյ· ի նմին ժողովի ընտրին և գանձապետ ընկերութեան և ատենադպիր Խորհրդարանի, ևս և օգնական նախագահի, որ ի ժամանակս բացակայութեան նորա վարեսցէ զպաշտօն նորին։

Յօդ· 7·

Զամենայն գործս վճռեն ի խորհրդարանի առաւելութեամբ ձայնից, իսկ ի հաւասարութեան նոցին՝ կարծիք նախագահի գերադասի և վճռէ զգործն։

Յօդ· 8·

Վասն վաւերականութեան վճռոց Խորհրդարանին ի վճռելն՝ թիւ մասնակցող անդամոց պարտէ լինիլ ոչ պակաս քան զերիս բաց ի նախագահէն։

Յօդ. 9.

Ամենայն վճիռք Խորհրդարանին արձանագրին յատենագրէն յառանձին մատենի.

Յօդ. 10.

Ընդհանուր ժողովն ընկերութեան գումարի միանգամ ի տարւոջ յամսեանն Յունվարի հրաւիրական թղթովք նախագահի՝ երկու շաբաթօք յառաջ քան զգումարումն. բաց յայսմանէ ընդհանուր ժողովն հրաւիրի ի տարաժամ դէպս և յայլ ժամանակս, ա.) յորժամ կարևոր դատեսցի վճռովն Խորհրդարանին, և բ.) երբ յանդամոց ընկերութեան թուով ոչ պակաս քան զքսան անձինս հարկաւոր համարիցին՝ գրաւոր յայտարարութեամբ իւրեանց յայտնելով ժողովոյն. Յայսպիսի դէպս հրաւէր անդամոց պարտի լինել երկու շաբաթօք յառաջ քան զժողովն. Յընդհանուր ժողովի քննին տարեկան գործողութիւնք Ընկերութեան և հաշուեմատեանք մտից և ելից նորին.

Յօդ. 11.

Կատարումն վճռոյն Ընդհանուր ժողովոյն պարտաւորեցուցիչ է վասն Խորհրդոյն ժողովոյ.

Յօդ. 12.

Գլխաւոր գործողութիւնք Ընկերութեան են, ա.) խնամարկել որբոց և չքաւորաց, այն է՝ դրամօք, կերակրովք, հանդերձիւք, դարմանօք ելն, ելն. բ.) ի դէպս ժողովրդական թշուառութեան, այնէ՝ սովու, տարափոխիկ հիւանդութեանց ելն, ձեռնհաս լինելով օգնել տնանկաց և որբոց ըստ արժանւոյն. գ.) օգնել աղքատ ուսանողաց դպրոցաց դրամօք, ուսումնական պիտոյիւք, հանդերձիւք և ուտեստիւք. դ.) ձեռներեց լինել և օժանդակել նորահաստատ տեղական ընթերցարանաց. իսկ յառաջագոյն եղելոցն, որ առ տեղական հոգևոր դպրոցս և ուսումնարանս՝ օգնել գրովք և ամսագրովք. ե.) մանաւանդ պարտաւորութիւն է Ընկերութեան աշխատել ունել շտեմարանս հացի, առ ի օգնել աղքատաց ի ժամանակի սղութեան և սովու, եւ զ.) ի վարձու ունել տարեկան զմի բժիշկ, իսկ եթէ ունելն անկարելի իցէ՝ յայնդէպս վասն բժշկութեան հիւանդաց չքաւորաց հրաւիրել զմասնաւոր բժիշկս՝ տալով զվարձն այցելութեան նորա յիւրաքանչիւր նուագի ի գումարէն Ընկերութեան.

Ծ-ն-օ-թ--ւ-ն. Չմերժի ըստ վերոյգրեալ կանոնաց օգնել բաց ի Հայոց՝ նաև օտարադաւան անձանց՝ բացառութեամբ.

Յօդ. 13.

Դրամագլուխ կամ մայր գումարն Ընկերութեան կազմի ա.) ի միանուագ նուիրանացն հիմնադիր եւ անփոփոխ անդամոց, բ.) ի տարեկան տրոց անդամոց, գ.) ի կամաւոր նուիրատուութեանց մասնաւոր անձանց և ի կտակաւանդ յիշատակաց, և դ.) ի գանձանակաց՝ զորս Ընկերութիւնն ունի ժողովել յեկեղեցիս Հայոց Գանձակ քաղաքի.

Յօդ. 14.

Ամենայն ծախք և մուտք Ընկերութեան պարտին անպատճառ արձանագրել ի ժապաւինեալ մատեանի, զոր պահեն ի Խորհրդարանի ընկերութեան առ գանձապետն։

Յօդ. 15.

Ի գումարաց Ընկերութեան պահի առ գանձապետն այնչափ միայն՝ որչափ հարկաւոր համարիցի Խորհրդարանն վասն ընթացիկ ծախուցմնացեալ գումարքն զետեղին յանուն Ընկերութեան ի միում յարբունական կամ ի քաղաքական դրամատանց ի շահեցումն տոկոսեաք, կամ թէ աւանդին ի ձեռս մասնաւորաց ապահով գրաւականաք և համերաշխութեամբ անդամոց Խորհրդարանին։

Յօդ. 16.

Դրամագլուխք ընկերութեան ի գործ դնին միայն ի ծախս այնպիսի իրաց՝ որք չիցեն արտաքոյ շրջանի գործողութեանց և նպատակի նորին։

Յօդ. 17.

Ընկերութիւն զամենայն դրամագլուխս իւր բաժանէ յերկուս կարգս։ ա.) ի գործածականս, զորս մարթէ ի կիր արկանել ըստ նկատողութեան Ընկերութեան, յորում ժամանակի և իցէ։ բ.) յանմերձենալիս, զորս ոչ է մարթ ի գործ ածել յընթացս յայտնի ինչ միջոցի առանց վճռոյ Ընդհանուր Ժողովոյ։ Յառաջին կարգի դրամագլխոց հաշուին տարեկան վճարք անդամոց Ընկերութեան, արդիւք կալուածոց՝ եթէ գտանիցին, տոկոսիք, որք կազմին ի գումարաց տուելոց ի շահեցումն ի դրամատունս և ի ձեռս մասնաւոր անձանց ապահով գրաւականաւ, նաև ի դրամոց, որք ժողովին յեկեղեցիս քաղաքիս ի գանձանակէ. իսկ յերկրորդում կարգի համարին հիմնական դրամագլուխքն նուիրեալք ի հիմնադիր և յանփոփոխ անդամոց Ընկերութեան, նոյնպէս և ի կտակաց։

Յօդ. 18.

Ի հաշուեմատեանս Ընկերութեան ունին արձանագրել ա.) բոլոր գործողութիւնք Ընկերութեան յիւրաքանչիւր ամի և բ.) տեղեկութիւնք դրամագլխոյ Ընկերութեան։ Ամենայն հաշիւք և յօդուածք ծախուցն պարտին ունիլ արդարացուցիչ վկայագիրս։

Յօդ. 19.

Ըստ այսմ օրինակի կազմեալ վաւերական հաշիւքն Ընկերութեան ներկայացուցանիցին Հոգեւոր Ծայրագոյն Իշխանութեան Հայոց ի Խորհրդարանէ Ընկերութեան յիւրաքանչիւր ամի, միանգամայն հրատարակին տպագրութեամբ ի լուր ընդհանուր հասարակութեան յիւրաքանչիւր տարի կամ առանձին տետրակաւ և կամ ի պարբերական թերթս։

Յօդ. 20.

Եթէ Ընկերութիւնն որպիսի և իցէ հանգամանաք դադարեցուցանիցէ զգործողութիւնս իւր, յայնժամ սեպհականութիւն Ընկերութեան պատկանի այնց դպրոցաց, որք գտանին առ եկեղեցիս Հայոց ի Գանձակ

քաղաքի, իսկ ի դէպս չլինելոյ այնոցիկ, յայնժամ մնան յօգուտ նոյն իսկ եկեղեցւոյ։

Յօդ. 21.

Ընկերութիւնն ունի զիւր սեպհական կնիքն մակագրութեամբ «Ինի հոգեբոյնութեան յերուսաղեմ Հայոց եկեղեցի Դանիել»։

Հետագայ հաշուեցուցակի հրատարակութիւնը խնդրուած է։

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ

ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՍՈՒՑ Ս. ԱՆԴՐԻԱՍԵԱՆ ՕՐԻՈՐԴ. ԴՊՐՈՑԻ ՇԱՄԱԽԻՈՑ

1880 թուից առ 17 Յունվարի 1881 ամի մնացել էր ուսումնարանապատկան մայր գումար Ս. Սանդիտեան Օրիորդական վարժարանի Շամախւոյ՝ դ հազար վեցհարիւր հինգ բուբլի երեսուն և երկու կոպէկ 1065 32

1881 թ. ստացած մուտք.

Ստացուեց քսան ուչորս անդամներից տուրք, իւրաքանչիւրից պատնէշն բուբլի	240	
Ստացուեց ութ խնամակալուհիներից տուրք, իւրաքանչիւրից հինգ բուբլի	40	
Ստացուեց տոկոսագրամ ուսումնարանապատկան մայր գումարից	112	
Գոյացան նուէրներից և հանգանակութիւնից	33	30
Ստացուեց թոշակագրամ աշակերտուհիներից	102	20
Ստացուեց օգուտ ի վաճառմանէ ուսումնարանապատկան իրեղինաց	5	41
Գումար	1598	23

ԾԱԽՍ.

Տուաւ ուսուցչաց և վարժուհւոյն վարձ	551	72
Տուաւ ծառային վարձ	38	20
Տուաւ ի գին այլ և այլ պիտոյից վասն ձեռագործութեան	2	95
Տուաւ ի գին վառելափայտի	41	38
Տուաւ ուսումնարանի տան տարեկան վարձ	159	96
Գումար	794	21
Մուտք	1598	23
Ծախք	794	21
Մնումէ գանձապահի մնտ ուսումնարանապատկան մայր գումար	804	2

Հոգաբարձուք { Յ. Տ. Էսայեան.
Գէորգ Դաճկաճեանց.

Շամախւոյ Ս. Սանդիտեան օրիորդական վարժարանի 1881 ամի մուտից եւ ծախսուց սոյն հաշուեցուցակից երեւումէ որ՝ Շիրուանցու հաղորդած տեղեկութեան համեմատ, որ հրատարակուեցաւ Աշխարհի Յունիսի ամսատետրում՝ արդարեւ յիշեալ վարժարանի յարգոյ Հոգաբարձութիւնը անցեալ 1881 թուականի ընթացքում բաց ի տարեկան մուտքից՝ մայր գումարից